ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 27-Լ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 29.01.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու լրամշակված ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր, ներքին անվտանգության, Երևան քաղաքի և մարզային վարչությունների ու ենթակա ստորաբաժանումների պետերին՝ ապահովել հավելվածով հաստատված ուղեցույցի իրազեկումն ենթակա անձնակազմին և դրա շրջանակներում մինչև 28.06.2021թ. կազմակերպել համապատասխան ծառայողների կողմից ստուգարքի հանձնումը:
3. Արդյունքների մասին 2-օրյա ժամկետում հայտնել ՀՀ ոստիկանության շտաբ:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2021թ. հունվարի 29-ի թիվ 2-Լ հրամանը:
5. Հրամանը ծանոթացնել ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«18» 06 2021թ.

ք.Երևան

Հավելված

ՀՀ ոստիկանության պետի

« 18 » հունիսի 2021թ. թիվ 27-Լ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու լրամշակված

1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 1-ից ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում, կենտրոնական ապարատի իրավասու ստորաբաժանումներում և ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասերում հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու գործընթացներն իրականացվելու է ավտոմատացված տեղեկատվական համակարգի կիրառմամբ:

2. Սույն ուղեցույցն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի, կենտրոնական ապարատի իրավասու ստորաբաժանումների և տարածքային մարմինների հերթապահ մասերի, ինչպես նաև պարեկային ծառայության կարգախմբերի ծառայողների կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու կարգը:

3. Հաղորդման հասկացությունը տրված է նշված որոշմամբ հաստատված կարգի (համաձայն Հավելված N 1) 3-րդ կետի 1 ենթակետով, իսկ հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումների հասկացությունները՝ 3-րդ կետի 2-ից 4-րդ ենթակատերով: Նույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է՝ հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումների գրանցման հասկացությունը, իսկ 2-րդ գլուխը՝ հաղորդումների ընդունման և գրանցման կարգը:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՕԿԿ) ծրագրային ապահովումից (այսուհետ՝ համակարգ) օգտվելու համար անհրաժեշտ է առնվազն 1080p (Full HD, 1920x1080 px) լուծաչափով դիսպլեյ և վերջին թարմացմամբ Google Chrome բրաուզեր:

2. Մուտք համակարգ

1. Համակարգ մուտք գործելու համար պետք է այցելել https://omc-academy.police.am հասցեում գտնվող վեբ հավելված, որտեղ կբացվի մուտքի էջը (տես նկ. 3.1): Որպես օգտանուն պետք է ներմուծել ՀՀ ոստիկանության վկայականի համարը:

2. Եթե չունեք ՀՀ ոստիկանության վկայական, ապա որպես օգտանուն պետք է ներմուծել հանրային ծառայությունների համարանիշը (այսուհետ՝ ՀԾՀ), եթե չի տրամադրվել այլ օգտանուն:

3. Եթե առաջին անգամ եք մուտք գործում համակարգ կամ Ձեր գաղտնաբառը զրոյացվել է (reset), ապա գաղտնաբառը հանդիսանում է Ձեր ՀԾՀ-ն:

4. Առաջին անգամ կամ գաղտնաբառը զրոյացնելուց հետո մուտք գործելիս կբացվի գաղտնաբառի ստեղծման էջը (տես նկ. 3.2), որտեղ նոր գաղտնաբառը գրելուց և հաստատելուց հետո կբացվի գլխավոր էջը:

5. Եթե արդեն ստեղծել եք նոր գաղտնաբառ, ապա համակարգ օգտանունով և գաղտնաբառով մուտք գործելուց հետո միանգամից կհայտնվեք գլխավոր էջում:



Նկ. 3.1



Նկ. 3.2

3. Պարեկի կողմից հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելը

1. Եթե պարեկին դիմում է քաղաքացին հանցագործության մասին հաղորդում տալու ցանկությամբ, պարեկը վեբ հավելվածի գլխավոր վահանակում ընտրում է «Բանավոր հաղորդման ընդունում» (տես նկ. 3.3):

Նկ. 3.3

2. Բացված հաղորդման ընդունման էջում հաղորդում ներկայացնողի անձնական տվյալներ ենթաբաժնում սեղմելով «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ» կոճակը, բացված դիալոգի միջոցով կարող եք նույնականացնել քաղաքացուն (տես նկ. 3.4):

Նկ. 3.4

3. Անձի նույնականացման համար լռելյան նշված է, որ նույնականացվում է ՀՀ քաղաքացի: Եթե անձը ՀՀ քաղաքացի չէ, ապա պետք է հանել «Հայաստանի քաղաքացի է» նշիչը: Վերջինս համակարգի հետ ներկառուցման փուլում է:

4. Եթե փակել եք անձի նույնականացման դիալոգը, ապա այն նորից կարող եք միացնել «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ» կոճակը սեղմելով:

5. «ՈՐՈՆՈՒՄ» կոճակը սեղմելուց հետո նույնականացումը հնարավոր է կատարել անձի անունով և ազգանունով, ինչպես նաև որոնման արդյունքը արագացնելու համար կարելի լրացուցիչ ներմուծել հայրանունը և ծննդյան օրը ամիսը և տարեթիվը (տես նկ. 3.5):

Նկ. 3.5

6. Դեմքով նույնականացնելու համար պետք է սեղմել «ԴԵՄՔՈՎ» կոճակը, որը կմիացնի համակարգչի տեսախցիկը: Տեսախցիկը պետք է պահել այնպես, որ նույնականացվող անձի դեմքը լինի կադրի մեջ և կադրի մեջ միաժամանակ այլ անձի դեմք չերևա: Նկարելու կոճակը սեղմելուց հետո էկրանին կպատկերվի արված լուսանկարը (տես նկ. 3.6): Անհրաժեշտության դեպքում կարելի է նորից նկարել: Հաստատման կոճակը սեղմելուց հետո կիրականացվի դեմքով անձի փնտրման պրոցեսը, որը կտևի մոտավորապես 4 վայրկյան:

Նկ. 3.6

7. Ե՛վ անուն ազգանունով, և՛ դեմքով փնտրելու դեպքում կհայտվի որոնման արդյունքների ցանկը, որտեղից կարող եք ընտրել նույնականացված անձին (տես նկ. 3.7): Եթե որոնման արդյունքը դատարկ է, կամ ցանկում չկա նույնականացվող անձը, ապա փնտրման տվյալները ճշգրտելուց հետո կարող եք կրկնել փնտրումը: Եթե անձը գտնվում է հետախուզման մեջ, ապա կցուցադրվի համապատասխան զգուշացում:

Նկ. 3.7

8. Եթե քաղաքացու անձնական տվյալները նույնականացման միջոցով չեն լրացվել, ապա դրանք կարելի է լրացնել համապատասխան դաշտերում (տես նկ. 3.8):



Նկ. 3.8

9. Հասցեների դաշտերը լրացնելու համար կբացվի նկ. 3.9-ում պատկերված հասցեի *խմբագրման էջը*, որտեղ հնարավոր է հասցեն ընտրել քարտեզից կամ որոնել տեքստի միջոցով: Լրացուցիչ տեղեկատվություն, ինչպիսիք են բնակարանի համարը և տեղանունը, կարող եք լրացնել: Հաստատել կոճակը սեղմելուց հետո հասցեի էջը կփակվի և խմբագրված հասցեն կլրացվի համապատասխան դաշտում:

Նկ. 3.9

10. Լրացնելով հաղորդում տվողի առնչությունն իրավախախտմանը կամ պատահարին (տես նկ. 3.10), պետք է տեղեկացնել քաղաքացուն ՀՀ քր. օր. 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:



Նկ. 3.10

11. Այնուհետև, եթե քաղաքացին համաձայն է, պետք է ստորագրի: Սեղմելով ստորագրության դաշտի վրա կբացվի ստորագրելու դիալոգը (տես նկ. 3.11), որտեղ քաղաքացին պետք է ստորագրի ակտիվ էլեկտրոնային գրիչով (ACTIVE PEN): Անհրաժեշտության դեպքում կարելի է ջնջել և նորից ստորագրել: Հաստատելուց հետո ստորագրությունը կհայտնվի հաղորդման մեջ (տես նկ. 3.12): Եթե քաղաքացին հրաժարվում է ստորագրել, ապա նշել «Քաղաքացին հրաժարվում է ստորագրել» դաշտը և անհրաժեշտության դեպքում հաղորդում ընդունողը կարող է գրել պատճառը բացված դաշտում (տես նկ. 3.13):

Նկ. 3.11



Նկ. 3.12

Նկ. 3.13

12. Իրավախախտման կամ պատահարի նկարագրությունը, վայրը և ամսաթիվը լրացվում են համապատասխան դաշտերում (տես նկ. 3.14):

13. Հաղորդումը ընդունելուց հետո պարեկը սեղմելով «ՈՒՂԱՐԿԵԼ ՀԱՍՏԱՏՄԱՆ» կոճակը, սպասում է ՕԿԿ հերթապահի կողմից հաստատման



Նկ. 3.14

14. Հաղորդում վերցնողը և հաղորդում տվողը պետք է ստորագրեն (տես նկ. 3.15): Ստորագրելուց հետո պետք է սեղմել «ՍՏԱՆԱԼ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՅԻՉ» կոճակը, որը հաղորդման էջի վերևի մասում կլրացնի հաղորդման հերթական համարը: Քաղաքացին վայրկյանների ընթացքում կստանա կարճ հաղորդագրություն (SMS) և էլ. փոստ հաղորդման ընդունման վերաբերյալ, եթե լրացվել են համապատասխան դաշտերը:

15. Եթե հաղորդում ներկայացնողը պահանջում է ծանուցագրի ֆիզիկական տարբերակը (թղթով), ապա պետք է նշել «Նշում ծանուցագիր ստանալու մասին» դաշտը: Այս պահին ծանուցագիրը տպելու գործառույթը ներկառուցման փուլում է:



Նկ. 3.15

4. Քաղաքացուց բանավոր հաղորդում ընդունելը ոստիկանության իրավասու ստորաբաժանումում կամ տարածքային մարմնում

1. Եթե իրավասու ստորաբաժանում կամ տարածքային մարմին դիմում է քաղաքացին հաղորդում տալու ցանկությամբ, հերրթապահ մասի հերթափոխի ավագը վեբ հավելվածի գլխավոր վահանակում ընտրում է «Բանավոր հաղորդման ընդունում»: Համակարգը գլխավոր վահանակից «Բանավոր հաղորդման ընդունում» հրահանգն ինքնաշխատ ձևակերպում է որպես «Ահազանգ»՝ «Հաղորդումը» փոխկապակցելով ահազանգին:

2. Բացված հաղորդման ընդունման էջում (տես նկ. 4.1) դեպքի տվյալների ենթաբաժնում լրացվում է ահազանգի տեսակը, դեպքի վայրի հասցեն:

3. Դեպքի համառոտ նկարագրություն դաշտում ազատ շարադրանքով համառոտ մուտքագրում է քաղաքացու կողմից հայտնած տեղեկությունները:



Նկ. 4.1

4. Հաղորդում ներկայացնողի անձնական տվյալներ ենթաբաժնում սեղմելով «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ» կոճակը, բացված դիալոգի միջոցով կարող եք

նույնականացնել քաղաքացուն (տես նկ. 4. 2): Անձի նույնականացման համար լռելյան նշված է, որ նույնականացվում է ՀՀ քաղաքացի: Եթե անձը ՀՀ քաղաքացի չէ, ապա պետք է հանել «Հայաստանի քաղաքացի է» նշիչը: Վերջինս համակարգի հետ ներկառուցման փուլում է: Եթե փակել եք անձի նույնականացման դիալոգը, ապա այն նորից կարող եք միացնել «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ» կոճակը սեղմելով:

5. «ՈՐՈՆՈՒՄ» կոճակը սեղմելուց հետո նույնականացումը հնարավոր է կատարել անձի անունով և ազգանունով, ինչպես նաև որոնման արդյունքը արագացնելու համար կարելի լրացուցիչ ներմուծել հայրանունը և ծննդյան օրը ամիսը և տարեթիվը (տես նկ. 4. 3):

Նկ. 4.2

4. 3

6. Դեմքով նույնականացնելու համար պետք է սեղմել «ԴԵՄՔՈՎ» կոճակը, որը կմիացնի համակարգչի տեսախցիկը: Տեսախցիկը պետք է պահել այնպես, որ նույնականացվող անձի դեմքը լինի կադրի մեջ և կադրի մեջ միաժամանակ այլ անձի դեմք չերևա: Նկարելու կոճակը սեղմելուց հետո էկրանին կպատկերվի արված լուսանկարը (տես նկ. 4. 4): Անհրաժեշտության դեպքում կարելի է նորից նկարել: Հաստատման կոճակը սեղմելուց հետո կիրականացվի դեմքով անձի փնտրման պրոցեսը, որը կտևի մոտավորապես 4 վայրկյան:





Նկ. 4. 4

7. Ե՛վ անուն ազգանունով, և՛ դեմքով փնտրելու դեպքում կհայտվի որոնման արդյունքների ցանկը, որտեղից կարող եք ընտրել նույնականացված անձին (տես նկ. 4. 5): Եթե որոնման արդյունքը դատարկ է, կամ ցանկում չկա նույնականացվող անձը, ապա փնտրման տվյալները ճշգրտելուց հետո կարող եք կրկնել փնտրումը: Եթե անձը գտնվում է հետախուզման մեջ, ապա կցուցադրվի համապատասխան զգուշացում:

Նկ. 4.5

8. Եթե քաղաքացու անձնական տվյալները նույնականացման միջոցով չեն լրացվել, ապա դրանք կարելի է լրացնել համապատասխան դաշտերում (տես նկ. 4. 1):

Նկ. 4.7

9. Հասցեների դաշտերը լրացնելու համար կբացվի նկ. 4.7-ում պատկերված հասցեի խմբագրման էջը, որտեղ հնարավոր է հասցեն ընտրել քարտեզից կամ որոնել տեքստի միջոցով: Լրացուցիչ տեղեկատվություն, ինչպիսիք են բնակարանի համարը և տեղանունը, կարող եք լրացնել: Հաստատել կոճակը սեղմելուց հետո հասցեի էջը կփակվի և խմբագրված հասցեն կլրացվի համապատասխան դաշտում:

10. Թարգմանչի և/կամ օրինական ներկայացուցիչի ներկայության դեպքում կարող եք սեղմել համապատասխանաբար «ԱՎԵԼԱՑՆԵԼ ԹԱՐԳՄԱՆԻՉ» և «ԱՎԵԼԱՑՆԵԼ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ» կոճակները նրանց անձնական տվյալները ներմուծելու համար, որը չի տարբերվում հաղորդում տվողի անձնական տվյալների մուտքագրման գործընթացից:

11. Անհրաժեշտ տվյալները լրացնելուց հետո հերրթապահ մասի հերթափոխի ավագը սեղմում է «ՈՒՂԱՐԿԵԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ» (տես նկ. 4.1) կոճակը, որից հետո համակարգը ծանուցում է ստորաբաժանման պետի (պատասխանատուի) վեբ հավելվածում (տես նկ. 4.8):

Նկ. 4.8

12. Ստորաբաժանման պետը (պատասխանատուն), վերադասության կանոնների համաձայն, հանձնարարում է հաղորդում ընդունելու գործընթացը՝ ստորաբաժանման հաստիքացանկից ընտրելով ծառայողին, իսկ տեղեկատուից՝ կոնկրետ հանձնարարականը՝

- Սահմանված կարգով լուծել ընթացքը
- Քաղաքացուց ընդունել հաղորդում

13. Ծառայողը, ում մակագրվել է իրականացնել հաղորդումը քննարկելու գործընթացը, իր աշխատանքային ձևաչափում ընտրում է ահազանգը և ծանոթանում (տես նկ. 4.9), այնուհետև սեղմում է «+ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ»:



Նկ. 4.9

14. Եթե քաղաքացու կողմից ներկայացվող տեղեկությունները ակնհայտ հանցագործության մասին չեն, առաջարկում է ներկայացնել դիմում սահմանված կարգով՝ տալով համապատասխան բանավոր պարզաբանում: Եթե քաղաքացին համաձայնվում է դիմում ներկայացնել կամ հրաժարվում է ՀՀ ոստիկանություն դիմելուց, սեղմում է «ԱՅԼ ԸՆԹԱՑՔ» ստեղնը (տես նկ. 4.10): Բացված պատուհանում տեղեկատուից ընտրում է՝

- «Կներկայացվի դիմում»
- «Հրաժարվում է դիմելուց»
- «Տեղեկությունների հայտնում միայն բանավոր»

15. Ավարտելով քաղաքացու հետ գործողությունները՝ ընտրում է «+ ՁԵԿՈՒՑԱԳԻՐ» ստեղնը և գործողությունները շարունակում դրանից բխող հերթականությամբ:

16. Եթե քաղաքացու կողմից ներկայացվող տեղեկությունները հանցագործության մասին են, ապա լրացվում է արձանագրության ձևաթուղթը: Արձանագրության հասցեն լրացվում է ինքնաշխատ հիմք ընդունելով բաժնի հասցեն: Նույնականացված անձանց տվյալները նույնպես լրացվում են ինքնաշխատ:


Արձանագրություն N__
Քաղաքացու անձնական տվյալներ
Հաղորդում տվող առնչությունն իրավախախտմանը կամ պատահարին
Հաղորդման տվյալները

Նկ. 4.10

17. Լրացնելով հաղորդում տվողի առնչությունն իրավախախտմանը կամ պատահարին՝ (տես նկ. 4.11), պետք է տեղեկացնել քաղաքացուն << քր. օր. 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:



Նկ. 4.11

18. Այնուհետև, եթե քաղաքացին համաձայն է, պետք է ստորագրի: Սեղմելով ստորագրության դաշտի վրա՝ կբացվի ստորագրելու դիալոգը (տես նկ. 4.12), որտեղ քաղաքացին պետք է ստորագրի ակտիվ էլեկտրոնային գրիչով (ACTIVE PEN): Անհրաժեշտության դեպքում կարելի է ջնջել և նորից ստորագրել: Հաստատելուց հետո ստորագրությունը կհայտնվի հաղորդման մեջ (տես նկ. 4.13):



Նկ. 4.12



Նկ. 4.13

19. Եթե քաղաքացին հրաժարվում է ստորագրել, ապա նշել «Քաղաքացին հրաժարվում է ստորագրել» դաշտը և անհրաժեշտության դեպքում հաղորդում ընդունողը կարող է գրել պատճառը բացված դաշտում (տես նկ. 4.14):

Նկ. 4.14

20. Իրավախախտման կամ պատահարի նկարագրությունը, վայրը և ամսաթիվը լրացվում են համապատասխան դաշտերում (տես նկ. 4. 15):



Նկ. 4. 15

21. Հաղորդում վերցնողը և հաղորդում տվողը պետք է ստորագրեն (տես նկ. 4. 15): Ստորագրելուց հետո պետք է սեղմել «ՍՏԱՆԱԼ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉ» կոճակը, որը հաղորդման էջի վերևի մասում կլրացնի հաղորդման հերթական համարը: Քաղաքացին վայրկյանների ընթացքում կստանա կարճ հաղորդագրություն (SMS) և էլ. փոստ հաղորդման ընդունման վերաբերյալ, եթե լրացվել են համապատասխան դաշտերը:

22. Էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը օգտագործվում են քաղաքացուն հաղորդման վերաբերյալ ծանուցելու համար: Եթե հաղորդում ներկայացնողը պահանջում է ծանուցագրի ֆիզիկական տարբերակը (թղթով), ապա պետք է նշել «Նշում ծանուցագիր ստանալու մասին» դաշտը: Այս պահին ծանուցագիրը տպելու գործառույթը ներկառուցման փուլում է: